

Կ-817-16.04.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո, բացառությամբ սույն մասում սահմանված դեպքերի: Օրենսգրքի 73-րդ գլխի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող հինգերորդ հարկային տարին լրանալուց հետո: Հարկային մարմինն օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների կողմից (որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում) ավտոմատ եղանակով Օրենսգրքի 80.2-րդ գլխին համապատասխան տրամադրված տեղեկությանը վերաբերող գործարքների կամ հարկման ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությունների հետ գործարքների մասով հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասերորդ հարկային տարին լրանալուց հետո: Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 134-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 156-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական

հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 402.2-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 402.3-րդ հոդվածով.

«**Հոդված 402.3.** Ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի և վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու, հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն ներկայացնելու, սուուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը պահպանելու կանոնները խախտելը

1. Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատության (այսուհետ սույն հոդվածում՝ ֆինանսական հաստատություն) կողմից *Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված* հաշվետերերի և վերահսկող անձանց (այսուհետ սույն հոդվածում՝ հաշվետերերի և վերահսկող անձանց) Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաշիվների (այսուհետ սույն հոդվածում՝ ֆինանսական հաշիվներ) վերաբերյալ՝ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները (այսուհետ սույն հոդվածում՝ տեղեկություն) հարկային մարմնին Օրենսգրքով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ այդ ժամկետից ուշ տրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված կամ Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով և սույն մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին չտրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար ֆինանսական *հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:*

3. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար ֆինանսական *հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով:*

4. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն հարկային մարմնին չներկայացնելու դեպքում՝ ֆինանսական *հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով:*

5. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց՝ Միասնական հաշվետվողական ստանդարտով սահմանված պատշաճ սուուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը չպահպանելու դեպքում՝ ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով

6. Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքում տուգանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածով սահմանված դեպքերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և հարկային մարմինը համատեղ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ հարկային մարմնի կողմից տրված մեթոդական ցուցումների կամ ազդակների հիման վրա:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված վերահսկողության ընթացակարգն ու մեթոդաբանությունը սահմանվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

9. Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը դրանք վերացրել է մինչև պատասխանատվության միջոցի վարույթ հարուցելը կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ, որի չափանիշները կարող են սահմանվել սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված մեթոդաբանությամբ:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 80.1-ին գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 80.2-րդ գլխով.

#### «Գ Լ ՈՒ Խ 80.2

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

**Հոդված 443.3. Օտարերկրյա պետությունների (տարածքների) հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակման ընդհանուր կանոններ**

1. Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակումը՝ հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայով (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ու «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» Իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրով (այսուհետ՝ այս գլխում համաձայնագրեր), ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հրապարակված Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետ սույն գլխում՝ Ստանդարտ) հիման վրա՝ հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում) ավտոմատ եղանակով սույն գլխով նախատեսված տեղեկության տրամադրումն է և տեղեկության ստացումն է:

2. Հարկային մարմինը ապահովում է Ստանդարտի, ինչպես նաև դրանում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Սույն գլխում կիրառվող հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը:

4. Սույն գլխի դրույթները տարածվում են Ստանդարտով սահմանված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների (այսուհետ՝ ֆինանսական հաստատություններ) վրա:

5. Սույն գլխի դրույթները տարածվում են օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտ համարվող հաշվետերերի և վերահսկող անձանց վրա.

1) նոր բացվող ֆինանսական հաշվի դեպքում՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից,

2) գործող ֆինանսական հաշիվների դեպքում, բացառությամբ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված դեպքերի, երբ առկա է 250 հազար Ամերիկայի միացյալ Նահանգների դոլարը կամ *դրան* համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ *դրան* համարժեք արտարժույթը գերազանցող՝ հարկային տարվա սկզբի կամ վերջի օրվա դրությամբ ֆինանսական հաշիվների մնացորդների հանրագումար, ինչպես նաև հարկային տարվա ընթացքում ֆինանսական հաշիվների մուտքերի (ավելացումների) գումարների

հանրագումարը կամ ելքերի (նվազեցումների) գումարների հանրագումարը գերազանցում է 250 հազար Ամերիկայի միացյալ նահանգների դոլարը կամ *դրան* համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ *դրան* համարժեք արտարժույթը,

3) գործող ֆինանսական հաշիվների դեպքում՝ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված կարգավորումների մասով՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի կիրառության իմաստով Ամերիկայի միացյալ նահանգների դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ համարժեք արտարժույթը որոշելիս հիմք է ընդունվում համապատասխանաբար հարկային տարվա սկզբի կամ վերջի օրվա դրությամբ, ինչպես նաև համապատասխան մուտքերի (ավելացումների) կամ ելքերի (նվազեցումների) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Սույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը:

#### **Հոդված 443.4. Ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմին տեղեկության տրամադրումը**

1. Ֆինանսական հաստատությունները պարտավոր են Օրենսգրքի 134-րդ և 156-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում հարկային մարմինն ներկայացնել *Սրանդարտով* սահմանված հաշվետերերի և վերահսկող անձանց և դրանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկություն (այսուհետ սույն գլխում՝ տեղեկություն), եթե հաշվետերերի և վերահսկող անձանց վերաբերյալ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգի համաձայն կամ ֆինանսական հաստատությանը հասանելի տեղեկության հիման վրա բացահայտվել է, որ դրանք օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ են:

2. Եթե Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգերի կամ ֆինանսական հաստատության մոտ առկա տեղեկության հիման վրա չեն բացահայտվել օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերեր և վերահսկող անձինք, ապա ֆինանսական հաստատությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ հարկային մարմինն ներկայացնել այդպիսի հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված տեղեկությունը ֆինանսական հաստատությունը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և տեղեկությունների ձևաչափը սահմանվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

4. Սույն գլխով նախատեսված ընթացակարգերի արդյունքում հաշվետիրոջ կամ վերահսկող անձի՝ հարկային մարմնին անհայտ եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում, այդ եկամուտները համարվում են տվյալ հաշվետու տարում ստացված, քանի դեռ դրանք այլ ժամանակաշրջանում ստացված լինելու վերաբերյալ փաստը չի ապացուցվել հաշվետիրոջ կամ վերահսկող անձի կողմից:

5. Հարկային մարմինը պետք է ապահովի իրեն հասանելի դարձած անձնական տվյալների և բանկային կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկատվության՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պահպանումը:

**Հոդված 443.5. Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմնի լիազորությունները**

1. Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմինը ֆինանսական հաստատությունից ստանում է հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ սույն գլխին համապատասխան ներկայացվող տեղեկություններ:

2. Հարկային մարմինը ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները փոխանցում է օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (հաշվետու պետություններին), որոնք ներառված են այն պետությունների (տարածքների) ցանկում, որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում և որոնց ռեզիդենտներն են հանդիսանում հաշվետերերը և վերահսկող անձինք: Պետությունների (տարածքների) ցանկը, որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում, հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պաշտպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Հարկային մարմինը իրավունք ունի օգտագործել օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ստացված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները, որպես Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված՝ երրորդ անձից ստացված տեղեկություններ, Համաձայնագրերում սահմանված նպատակներով:

**Հոդված 443.6. Ֆինանսական հաստատությունների, հաշվետերերի և վերահսկող անձանց պարտականություններն ու իրավունքները՝ կապված ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ**

1. Հաշվետերերի և վերահսկող անձանց ռեզիդենտությունը պարզելու համար ֆինանսական հաստատությունն իրականացնում է հաշվետերերի և վերահսկող անձանց Ստանդարտով սահմանված պատշաճ ուսումնասիրություն:

2. Հաշվետերերը և վերահսկող անձինք պարտավոր են ֆինանսական հաստատությանը ներկայացնել իրենց և (կամ) փոխկապակցված հաշվետերերի ու վերահսկող անձանց վերաբերյալ ֆինանսական հաստատության կողմից սույն գլխին համապատասխան պահանջվող տեղեկությունը:

3. Եթե անձը՝ ֆինանսական հաշիվ բացելիս ֆինանսական հաստատությանը չի տրամադրում սույն գլխով և Ստանդարտով պահանջվող տեղեկությունները, ապա ֆինանսական հաստատությունը մերժում է ֆինանսական հաշիվ բացելը:

4. Ֆինանսական հաստատությունը պարտավոր է ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձից ստանալ *գրավոր* համաձայնություն սույն գլխով նախատեսված տեղեկությունները հարկային մարմին տրամադրելու վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձը համաձայնություն տրամադրելուց հրաժարվելու կամ ֆինանսական հաստատության կողմից համաձայնություն տալու պահանջ ներկայացնելու պահից 10-օրյա ժամկետում համաձայնություն չտրամադրելու դեպքում՝ ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում բացված՝ առկա ֆինանսական հաշիվների դեպքում՝ ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշիվին իրենց դրամական միջոցները

փոխանցելու կամ նրանց՝ իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին:

6. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգերի արդյունքում ֆինանսական հաստատությունը բացահայտում է հաշվետերիրոջ կամ վերահսկող անձի տրամադրած տեղեկության ոչ ճշգրիտ կամ թերի լինելը ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում բացված՝ առկա ֆինանսական հաշիվների դեպքում՝ ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշիվի իրենց դրամական միջոցները փոխանցելու կամ նրանց՝ իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին:»:

**Հոդված 6.** Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 20-րդ օրվանից:

**Հոդված 7.** Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները ֆինանսական հաստատություններն ներկայացնելու են 2024 թվականի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար:

2. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված ժամկետը չի տարածվում մինչև 2020 թվականը ներառյալ հարկային տարիների ընթացքում կատարված՝ Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումների վրա:

3. *Օրենսգրքի 402.3-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:*

4. Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

5. Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

6. Օրենսգրքի 443.5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո, բացառությամբ սույն մասում սահմանված դեպքերի: Օրենսգրքի 73-րդ գլխի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող հինգերորդ հարկային տարին լրանալուց հետո: Հարկային մարմինն օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների կողմից (որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում) ավտոմատ եղանակով Օրենսգրքի 80.2-րդ գլխին համապատասխան տրամադրված տեղեկությանը վերաբերող գործարքների կամ հարկման ազատական համակարգեր ունեցող երկրներում (աշխարհագրական տարածքներում) գրանցված (հաշվառված) կազմակերպությունների հետ գործարքների մասով հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասերորդ հարկային տարին լրանալուց հետո: Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 134-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 156-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած (հաշվառված) ռեզիդենտ և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատությունները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա

մայիսի 10-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 443.4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 402.2-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 402.3-րդ հոդվածով.

**«Հոդված 402.3. Ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի և վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու, հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն ներկայացնելու, ստուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը պահպանելու կանոնները խախտելը**

1. Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված Ֆֆինանսական հաստատության (այսուհետ սույն հոդվածում՝ ֆինանսական հաստատություն) կողմից Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված հաշվետերերի և վերահսկող անձանց (այսուհետ սույն հոդվածում՝ հաշվետերերի և վերահսկող անձանց) Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաշիվների (այսուհետ սույն հոդվածում՝ ֆինանսական հաշիվներ) վերաբերյալ՝ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները (այսուհետ սույն հոդվածում՝ տեղեկություն) հարկային մարմնին Օրենսգրքով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ այդ ժամկետից ուշ տրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված կամ Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով~~հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:~~

2. Սույն հոդվածի 1-ին մասով և սույն մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին չտրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով~~հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:~~

3. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ կեղծ տեղեկության համար ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով~~հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:~~

4. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն հարկային մարմնին չներկայացնելու դեպքում՝ ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով~~հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:~~

5. Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց՝ Միասնական հաշվետվողական ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը չպահպանելու դեպքում՝ ֆինանսական հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով~~հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:~~



6. Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքում տուգանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածով սահմանված դեպքերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և հարկային մարմինը համատեղ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ հարկային մարմնի կողմից տրված մեթոդական ցուցումների կամ ազդակների հիման վրա:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված վերահսկողության ընթացակարգն ու մեթոդաբանությունը սահմանվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

9. Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը դրանք վերացրել է մինչև պատասխանատվության միջոցի վարույթ հարուցելը կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ, որի չափանիշները կարող են սահմանվել սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված մեթոդաբանությամբ:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 80.1-ին գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 80.2-րդ գլխով.

#### **«Գ Լ ՈՒ Խ 80.2**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

**Հոդված 443.3.** Օտարերկրյա պետությունների (տարածքների) հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակման ընդհանուր կանոններ

6. Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմինների հետ ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատ փոխանակումը՝ հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայով (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ու «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» Իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրով (այսուհետ՝ այս գլխում համաձայնագրեր), ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հրապարակված Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետ սույն գլխում՝ Ստանդարտ) հիման վրա՝ հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում) ավտոմատ եղանակով սույն գլխով նախատեսված տեղեկության տրամադրումն է և տեղեկության ստացումն է:

7. Հարկային մարմինը ապահովում է Ստանդարտի, ինչպես նաև դրանում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

8. Սույն գլխում կիրառվող հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը:

9. Սույն գլխի դրույթները տարածվում են Ստանդարտով սահմանված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների (այսուհետ՝ ֆինանսական հաստատություններ) վրա:

10. Սույն գլխի դրույթները տարածվում են օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտ համարվող հաշվետերերի և վերահսկող անձանց վրա.

4) նոր բացվող ֆինանսական հաշվի դեպքում՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից,

5) գործող ֆինանսական հաշիվների դեպքում, բացառությամբ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 5-74-6-րդ մասերով սահմանված դեպքերի, երբ առկա է 250 հազար Ամերիկայի միացյալ Նահանգների դոլարը կամ դրան համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող՝ հարկային տարվա սկզբի կամ վերջի օրվա դրությամբ ֆինանսական հաշիվների մնացորդների հանրագումար, ինչպես նաև հարկային տարվա ընթացքում ֆինանսական հաշիվների մուտքերի (ավելացումների) գումարների հանրագումարը կամ ելքերի (նվազեցումների) գումարների հանրագումարը գերազանցում է 250 հազար Ամերիկայի միացյալ Նահանգների դոլարը կամ դրան համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը,

6) գործող ֆինանսական հաշիվների դեպքում՝ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված կարգավորումների մասով՝ անկախ ֆինանսական հաշվի արժեքից:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի կիրառության իմաստով Ամերիկայի միացյալ Նահանգների դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ համարժեք արտարժույթը որոշելիս հիմք է ընդունվում համապատասխանաբար հարկային տարվա սկզբի կամ վերջի օրվա դրությամբ, ինչպես նաև համապատասխան մուտքերի (ավելացումների) կամ ելքերի (նվազեցումների) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Սույն հոդվածի կիրառության իմաստով, որպես տվյալ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք, հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը:

#### **Հոդված 443.4. Ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմին տեղեկության տրամադրումը**

1. Ֆինանսական հաստատությունները պարտավոր են Օրենսգրքի 134-րդ և 156-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում հարկային մարմնին ներկայացնել ~~Միասնական հաշվետվողական~~ սՍտանդարտով սահմանված հաշվետերերի և վերահսկող անձանց և դրանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկություն (այսուհետ սույն գլխում՝ տեղեկություն), եթե հաշվետերերի և վերահսկող անձանց վերաբերյալ Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգի համաձայն կամ ֆինանսական հաստատությանը հասանելի տեղեկության հիման վրա բացահայտվել է, որ դրանք օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ են:

2. Եթե Օրենսգրքի 443.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգերի կամ ֆինանսական հաստատության մոտ առկա տեղեկության հիման վրա չեն բացահայտվել օտարերկրյա պետությունների (տարածքների) ռեզիդենտներ հանդիսացող հաշվետերեր և վերահսկող անձինք, ապա ֆինանսական հաստատությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ հարկային մարմնին ներկայացնել այդպիսի հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված տեղեկությունը ֆինանսական հաստատությունը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և տեղեկությունների ձևաչափը սահմանվում է

հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:

4. Սույն գլխով նախատեսված ընթացակարգերի արդյունքում հաշվետիրոջ կամ վերահսկող անձի՝ հարկային մարմնին անհայտ եկամուտների վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում, այդ եկամուտները համարվում են տվյալ հաշվետու տարում ստացված, քանի դեռ դրանք այլ ժամանակաշրջանում ստացված լինելու վերաբերյալ փաստը չի ապացուցվել հաշվետիրոջ կամ վերահսկող անձի կողմից:

5. Հարկային մարմինը պետք է ապահովի իրեն հասանելի դարձած անձնական տվյալների և բանկային կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկատվության՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան պահպանումը:

#### **Հոդված 443.5. Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմնի լիազորությունները**

2. Ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ կապված հարկային մարմինը ֆինանսական հաստատությունից ստանում է հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ սույն գլխին համապատասխան ներկայացվող տեղեկություններ:

2. Հարկային մարմինը ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները փոխանցում է օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին (հաշվետու պետություններին), որոնք ներառված են այն պետությունների (տարածքների) ցանկում, որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում և որոնց ռեզիդենտներն են հանդիսանում հաշվետերերը և վերահսկող անձինք: Պետությունների (տարածքների) ցանկը, որոնց հետ իրականացվում է ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակում, հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պաշտպանության պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Հարկային մարմինը իրավունք ունի օգտագործել օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ստացված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունները, որպես Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված՝ երրորդ անձից ստացված տեղեկություններ, Համաձայնագրերում սահմանված նպատակներով:

#### **Հոդված 443.6. Ֆինանսական հաստատությունների, հաշվետերերի և վերահսկող անձանց պարտականություններն ու իրավունքները՝ կապված ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ավտոմատ փոխանակման հետ**

1. Հաշվետերերի և վերահսկող անձանց ռեզիդենտությունը պարզելու համար ֆինանսական հաստատությունն իրականացնում է հաշվետերերի և վերահսկող անձանց Ստանդարտով սահմանված պատշաճ ուսումնասիրություն:

2. Հաշվետերերը և վերահսկող անձինք պարտավոր են ֆինանսական հաստատությանը ներկայացնել իրենց և (կամ) փոխկապակցված հաշվետերերի ու վերահսկող անձանց վերաբերյալ ֆինանսական հաստատության կողմից սույն գլխին համապատասխան պահանջվող տեղեկությունը:

3. Եթե անձը՝ ֆինանսական հաշիվ բացելիս ֆինանսական հաստատությանը չի տրամադրում սույն գլխով և Ստանդարտով պահանջվող տեղեկությունները, ապա ֆինանսական հաստատությունը մերժում է ֆինանսական հաշվի բացելը:

4. Ֆինանսական հաստատությունը պարտավոր է ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձից ստանալ գրավոր համաձայնություն սույն գլխով նախատեսված տեղեկությունները հարկային մարմին տրամադրելու վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձը համաձայնություն տրամադրելուց հրաժարվելու կամ ֆինանսական հաստատության կողմից համաձայնություն տալու պահանջ ներկայացնելու պահից 10-օրյա ժամկետում համաձայնություն չտրամադրելու դեպքում՝ ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում բացված՝ առկա ֆինանսական հաշիվների դեպքում՝ ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշիվին իրենց դրամական միջոցները փոխանցելու կամ նրանց՝ իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին:

6. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ընթացակարգերի արդյունքում ֆինանսական հաստատությունը բացահայտում է հաշվետերիրոջ կամ վերահսկող անձի տրամադրած տեղեկության ոչ ճշգրիտ կամ թերի լինելը ֆինանսական հաստատությունը մերժում է նոր ֆինանսական հաշիվների բացումը, իսկ նախկինում բացված՝ առկա ֆինանսական հաշիվների դեպքում՝ ֆինանսական հաստատությունը հրաժարվում (դադարեցնում) է ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ նրանց անունով այլ հաստատությունում բացված հաշիվին իրենց դրամական միջոցները փոխանցելու կամ նրանց՝ իրենց դրամական միջոցները տրամադրելու գործարքների: Ֆինանսական հաստատությունը ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց հրաժարվելու դեպքում, այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է այդ անձին:»:

**Հոդված 6.** Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 20-րդ օրվանից:

**Հոդված 7.** Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները ֆինանսական հաստատություններն ներկայացնելու են 2024 թվականի և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար:

2. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված ժամկետը չի տարածվում մինչև 2020 թվականը ներառյալ հարկային տարիներին ընթացքում կատարված՝ Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումների վրա:

3. Օրենսգրքի 402.3-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

43. Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

54. Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը և

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

65. Օրենսգրքի 443.5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ հրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-817-16.04.2024-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

N°	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	<b>1-ին հոդված</b>	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, որի արդյունքում առկա են չհամարակալված պարբերություններ: Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, առաջարկվում է Օրենսգրքի 44-րդ	Ընդունվել է:  ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է մեկ պարբերությամբ, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին պահանջը:	Ընդունվել է:

			հողվածի 2-րդ մասը շարադրել մեկ պարբերությամբ:		
2.	ՀՀ կառավարություն	<b>4-րդ հողված</b>	<p>Նախագծի 4-րդ հողվածով նոր լրացվող 402.3-րդ հողվածի վերնագիրն է՝ ֆինանսական հաստատության կամ հաշվետերերի և վերահսկող անձանց կողմից ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու կանոնները խախտելը, մինչդեռ՝ նույն հողվածի 4-րդ մասով նախատեսվել է պատասխանատվություն հաշվետերերի և վերահսկող անձանց չբացահայտման մասին տեղեկություն չներկայացվելու համար, իսկ 5-րդ մասով՝ Միասնական հաշվետվողական ստանդարտով սահմանված պատշաճ ստուգման (ուսումնասիրության) ընթացակարգերը չպահպանելու համար: Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հողվածի 8-րդ մասը, համաձայն որի, մասնավորապես՝ հողվածների վերնագրերը համապատասխանում են հողվածների բովանդակությանը, առաջարկվում է նոր լրացվող 402.3-րդ հողվածի վերնագիրը և բովանդակությունը համապատասխանեցնել միմյանց:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծի 4-րդ հողվածով նոր լրացվող 402.3-րդ հողվածի վերնագիրը լրամշակվել է, համապատասխանեցվել է հողվածի բովանդակությանը:</p>	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	<b>4-րդ հողված</b>	Նախագծի 4-րդ հողվածով նախատեսվող Հայաստանի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			<p>Հանրապետության հարկային օրենսգրքում նոր լրացվող 402.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների վերաբերյալ՝ Օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները (այսուհետ սույն հոդվածում՝ տեղեկություն) հարկային մարմնին Օրենսգրքով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ այդ ժամկետից ուշ տրամադրելու դեպքում՝ յուրաքանչյուր չտրամադրված կամ Օրենսգրքով սահմանված ժամկետից ուշ տրամադրված տեղեկության համար ֆինանսական հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:</p> <p>«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում նախատեսվում են միայն արդեն իսկ նշանակված տուգանքի գանձան վերաբերյալ ընթացակարգային կարգավորումներ և բացակայում են տուգանքի նշանակման կարգի չափի վերաբերյալ կարգավորումները:</p> <p>Հաշվի առնելով, որ նոր լրացվող 402.3-րդ հոդվածը կարող է</p>	<p>Նախագծի 4-րդ հոդվածով նոր լրացվող 402.3-րդ հոդվածում սահմանվել են տուգանքի համապատասխան չափեր խախտման յուրաքանչյուր դեպքի համար: Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-5-րդ մասերում «հաստատության նկատմամբ կիրառվում է տուգանքի տեսքով պատասխանատվության միջոց՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինվել են 1-ին մասում՝ «հաստատությունից գանձվում է տուգանք՝ 500 հազար դրամի չափով» բառերով, 2-րդ մասում՝ «հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով» բառերով, 3-րդ մասում՝ «հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով» բառերով, 4-րդ մասում՝</p>	
--	--	--	---	--	--



			խնդրահարույց լինել Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի տեսանկյունից՝ առաջարկվում է հարկային օրենսգրքում լրացվող 402.3-րդ հոդվածով նախատեսված խախտման յուրաքանչյուր դեպքի համար սահմանել տուգանքի համապատասխան չափեր:	«հաստատությունից գանձվում է տուգանք՝ 250 հազար դրամի չափով», 5-րդ մասում՝ «հաստատությունից գանձվում է տուգանք՝ 1 միլիոն դրամի չափով» բառերով:	
4.	ՀՀ կառավարություն	<b>4-րդ հոդված</b>	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող օրենսգրքում նոր լրացվող 443.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն գլխում կիրառվող հասկացություններն ունեն Ստանդարտով սահմանված նշանակությունը»: Միաժամանակ, նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքում նոր լրացվող 402.3-րդ հոդվածում արդեն իսկ օգտագործվում են «ֆինանսական հաստատություն», «հաշվետերեր», «վերահսկող անձ» և այլ հասկացություններ, որոնց բովանդակությունը բացահայտվում է միայն նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքում նոր լրացվող 80.2-րդ գլխում: Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկվում է	Ընդունվել է:  Նախագծի 4-րդ հոդվածով նոր լրացվող 402.3-րդ հոդվածում օգտագործվող հասկացությունները հստակեցման նպատակով, նշվել է, որ կիրառվում է Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված հասկացությունները:  Նշված հոդվածի 1-ին մասում «ֆինանսական հաստատության» բառերը փոխարինվել են «Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված ֆինանսական հաստատության (այսուհետ սույն հոդվածում՝ ֆինանսական հաստատություն)» բառերով, «հաշվետերերի և	Ընդունվել է:

			<p>հողվածով լրացվող 402.3-րդ հողվածի 1-ին մասում օգտագործվող հասկացությունները բացահայտել, քանի որ նշված հասկացությունների բովանդակությունը բացահայտվում է միայն 5-րդ հողվածով նախատեսվող օրենսգրքում նոր լրացվող 80.2-րդ գլխում:</p>	<p>վերահսկող անձանց» բառերից հետո լրացվել են «(այսուհետ սույն հողվածում՝ հաշվետերերի և վերահսկող անձանց) Օրենսգրքի 80.2-րդ գլխով սահմանված» բառերը, իսկ «ֆինանսական հաշիվների» բառերից հետո լրացվել են «(այսուհետ սույն հողվածում՝ ֆինանսական հաշիվներ)» բառերը:</p>	
5.	ՀՀ կառավարություն	<b>4-րդ հողված</b>	<p>Նախագծի 4-րդ հողվածով նոր լրացվող 402.3-րդ հողվածում տուգանքների չափերի հստակեցման և դրա կիրառման նպատակով սահմանվել է, որ վերահսկողությունը իրականացնելու է ԿԲ՝ հարկային մարմնի կողմից տրված մեթոդական ցուցումների կամ ազդակների հիման վրա: Սահմանվել է, որ վերահսկողության ընթացակարգն ու մեթոդաբանությունը սահմանվում է հարկային մարմնի և ՀՀ ԿԲ-ի կողմից համատեղ: Սահմանվել է նաև, այն դեպքերը, երբ նույն հողվածով սահմանված տուգանքները չեն կիրառվի:</p> <p>Առաջարկվում է 4-րդ հողվածով լրացվող օրենսգրքի 402.3-րդ հողվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-9-րդ մասեր.</p> <p>«6. Սույն հողվածով սահմանված</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծի 4-րդ հողվածով լրացվող օրենսգրքի 402.3-րդ հողվածում լրացվել է 6-9-րդ մասերը:</p>	<p>Ընդունվել է:</p>

		<p>խախտումների դեպքում տուգանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:</p> <p>7. Սույն հոդվածով սահմանված դեպքերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և հարկային մարմինը համատեղ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ հարկային մարմնի կողմից տրված մեթոդական ցուցումների կամ ազդակների հիման վրա:</p> <p>8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված վերահսկողության ընթացակարգն ու մեթոդաբանությունը սահմանվում է հարկային մարմնի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով:</p> <p>9. Սույն հոդվածով սահմանված խախտումների դեպքում տուգանքները չեն կիրառվում, եթե ֆինանսական հաստատությունը դրանք վերացրել է մինչև պատասխանատվության միջոցի</p>		
--	--	--	--	--

			վարույթ հարուցելը կամ խախտումը կրում է տեխնիկական բնույթ, որի չափանիշները կարող են սահմանվել սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված մեթոդաբանությամբ:»:		
6.	ՀՀ կառավարություն	<b>5-րդ հոդված</b>	<p>Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 80.2-րդ գլխի 443.3-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում առկա է վրիպակ «4-6» թվերի փոխարեն նշված է «5-7» թվերը: Օրենսգրքում լրացվող նոր 80.2-րդ գլխի 443.6-րդ հոդվածը բաղկացած է 6 մասերից:</p> <p>Նույն հոդվածում հստակեցման նպատակով առաջարկվում է «Ամերիկայի միացյալ Նահանգների դոլարը կամ համարժեք Հայաստանի Հանրապետության դրամը կամ համարժեք արտարժույթը» արտահայտությունում «կամ» բառերից հետո լրացնել «դրան» բառերով:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող օրենսգրքի 443.3-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն: Մասնավորապես՝ նշված մասում «5-7» թվերը փոխարինվել են «4-6» թվերով, իսկ «դոլարը կամ» բառերից հետո լրացվել է «դրան» բառերը, «դրամը կամ» բառերից հետո լրացվել է «դրան» բառերը :</p>	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	<b>5-րդ հոդված</b>	<p>Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքում նոր լրացվող 443.3-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվել է՝ «Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետ սույն գլխում՝ Ստանդարտ): «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ</p>	<p>Ընդունվել է:</p> <p>«Միասնական հաշվետվողական ստանդարտ» բառերը նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 443.4-րդ հոդվածի 1-ին մասում փոխարինվել է «Ստանդարտ» բառով:</p>	Ընդունվել է:

			<p>իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:»:</p> <p>Առաջարկվում է «Միասնական հաշվետվողական ստանդարտ» բառերը նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 443.4-րդ հոդվածի 1-ին մասում փոխարինվել է «Ստանդարտ» բառով:</p>		
8.	ՀՀ կառավարություն	<b>5-րդ հոդված</b>	<p>Օրենսգրքում լրացվող նոր 80.2-րդ գլխի 443.6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «4. Ֆինանսական հաստատությունը պարտավոր է ֆինանսական հաշիվ բացող կամ ֆինանսական հաշիվ ունեցող անձից ստանալ համաձայնություն սույն գլխով նախատեսված տեղեկությունները հարկային մարմին տրամադրելու վերաբերյալ:»:</p> <p>Առաջարկվում է օրենսգրքով սահմանել համաձայնության տրման ձևը՝ գրավոր եղանակով է տրվելու համաձայնությունը:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նշված հոդվածի 4-րդ մասում սահմանվել է, որ համաձայնությունը տրվելու է գրավոր ձևով:</p>	Ընդունվել է:

9.	ՀՀ կառավարություն	<b>7-րդ հոդված</b>	<p>Ենթաօրենսդրական նորմատիվ ակտի ընդունման ժամկետ ապահովելու համար առաջարկվում է 7-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.</p> <p>«3. Օրենսգրքի 402.3-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը հարկային մարմինը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը սահմանում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Օրենքի 7-րդ հոդվածը լրացվել է 3-րդ մասով:</p> <p>Միաժամանակ, վերանայվել են 7-րդ հոդվածի մասերի համարակալումը:</p>	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	<b>7-րդ հոդված</b>	<p>Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթները՝ առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում կիրառված «ենթաօրենսդրական ակտը» բառերն փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը» բառերով:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Հոդվածի նշված մասերում «ենթաօրենսդրական ակտ» բառերը փոխարինվել են «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը» բառերով:</p>	Ընդունվել է: